Իրավապաշտպանների վիճակը Հայաստանում
2011 թ. հունվար - 2012 թ. նոյեմբեր

Կազմվել է Իրավապաշտպանների Հարավկովկասյան ցանցի անդամ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի
գրասենյակի կողմից

Իրավապաշտպանների Հարավկովկասյան ցանցի անդամներն ու գործընկերները
մասնակցել են զեկույցի պատրաստմանը
Հանրային տեղեկատվության և գիտելիքի կարիք - Հայաստան, Հելսինկյան Ասոցացիա,
Իրավունքի գերակայություն

Աջակիցներ՝ Սոցիոսկոպ, Ժողովրդավարությունն այսօր, Շահխաթուն, Կանանց
ռեսուրսային կենտրոն

Վանաձոր, Նոյեմբեր 2012 թ.

Կազմում և խմբագրում՝

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Հայաստան
Հանրային տեղեկատվության և գիտելիքի կարիք, Հայաստան
Հելսինկյան Ասոցացիա, Հայաստան
Իրավունքի գերակայություն, Հայաստան
Սահմանադրության Հոդված 42, Վրաստան

Աջակիցներ՝

Սոցիոսկոպ, Հայաստան
Ժողովրդավարությունը այսօր, Հայաստան
Շահխաթուն, Հայաստան
Կանանց ռեսուրսային կենտրոն, Հայաստան

Սույն զեկույցը հանդիսանում է Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում իրավապաշտպանների վիճակի վերաբերյալ Իրավապաշտպանների Հարավկովկասյան ցանցի համատեղ զեկույցի մի մասը: Համատեղ զեկույցը հասանելի կլինի Իրավապաշտպանների Հարավկովկասյան ցանցի կայքէջում. www.caucasusnetwork.org

Իրավապաշտպանների Հարավկովկասյան ցանցը միավորում է Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի 30 իրավապաշտպան կազմակերպությունների: Ցանցը ձգտում է հեշտացնել Հարավային կովկասում իրավապաշտպանների համար ավելի ապահով և նպաստավոր միջավայր ստեղծել և հզորացնել նրա ձայնը տարածաշրջանային և միջազգային մակարդակներում: Ցանցի հիմնադրմանն աջակցել է Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիք ծրագիրը:

HUMAN RIGHTS HOUSE FOUNDATION

Մարդու իրավունքների տուն հիմնադրամը նպաստել է զեկույցի ավարտմանը և առաջարկությունների մշակմանը

TRANSITION
Ministry of Foreign Affairs of the Czech Republic

NORWEGIAN MINISTRY OF FOREIGN AFFAIRS

Սույն զեկույցը հրապարակվել է Չեխիայի Հանրապետության և Նորվեգիայի արտաքին գործերի նախարարությունների աջակցությամբ.

Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է իրավապաշտպանների հարավկովկասյան ցանցը և բովանդակությունը կարող է չարտացոլել չեխական և նորվեգական արտաքին գործերի նախարարությունների դիրքորոշումը

Բովանդակություն

I. ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐ. ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, 2011 Թ. ՀՈՒՆՎԱՐ - 2012 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ 4
II. ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ 2011-2012 ԹԹ. 7
Ա. Հարձակումներ և սպառնալիքներ իրավապաշտպանների նկատմամբ 7
Լրագրողներ 7
ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպաններ 8
Հակամարտության լուծման ջատագովներ 10
Բնապահպաններ 11
Իրավաբաններ 12
Բ. Իրավապաշտպանների կամայական հարցաքննություն և ազատազրկում 12
Գ. Սպառնալիքներ իրավապաշտպան կազմակերպությունների նկատմամբ 14
Դ. Վարկաբեկող քարոզարշավներ ընդդեմ իրավապաշտպանների 14
Ե. Իրավական գործողություններ ընդդեմ իրավապաշտպանների 17
Քրեական հետապնդումներ և մեղադրանքներ 17
Զրպարտություն և վիրավորանք 19
Զ. Իրավապաշտպանների գործունեության այլ սահմանափակումներ 19
Իրավաբանական աջակցության սահմանափակում 21
Դատական համակարգի կողմնակալություն 23
III. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 24

I. ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐ. ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, 2011 Թ. ՀՈՒՆՎԱՐ - 2012 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ

2011-2012 թթ. Հայաստանում իրավապաշտպանները շարունակել են գործել դժվարին քաղաքական և շահերի պաշտպանության իրավիճակում: Երկրի իրավական համակարգի նկատմամբ քաղաքացիների անվստահության, անհուսության և անտարբերության մթնոլորտը, որն ստեղծվել էր 2008 թ. նախագահական ընտրություններին հաջորդող ցույցերի և բախումների արդյունքում, շարունակվել է զեկուցվող ժամանակահատվածում: Քաղաքացիական հասարակությունը շարունակել է մարգինալացված մնալ կառավարման գործընթացներից[1] և կառավարությունը որևէ կերպ չի խրախուսել իրավապաշտպանների գործունեությունը և մասնակցությունը քաղաքական գործընթացներին:[2] Զեկույցում ներկայացված ժամանակահատվածում կառավարությունը նաև չի իրականացրել տարբեր միջազգային կառույցների առաջարկները, ներառյալ ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանների հարցերով հատուկ զեկուցողի առաջարկները: Կառավարությունը նաև չի ձգտել իրականացնել մարդու իրավունքների հետ կապված այն բոլոր պարտավորությունները, որոնք կառավարությունը հանձնառել է 1999 թ. Եվրոպայի խորհրդի հետ գործընկերության համաձայնագրով, հատկապես նրանք, որոնք վերաբերում են օրենքի գերակայությանը:[3] Դատական իշխանությունը դեռևս բարեփոխումների կարիք ունի բոլոր քաղաքացիների համար արդարադատության հասանելիության ապահովման և արդար դատաքննության երաշխավորման ուղղությամբ. խնդիրներ, որոնք ընդգծվել են

[1] Այս թեմայի վերաբերյալ ՄԱԿ-ի Իրավապաշտպանների իրավիճակի հարցերով Հատուկ զեկուցողը հայտարարել է, որ "Կառավարությունը կարծես թե ՀԿ-ներին չի համարում պոտենցիալ գործընկերներ, և ոչ էլ հասարակությունն է նրանց ընդունում որպես ներկայացուցչական:" ՄԱԿ-ի Իրավապաշտպանների իրավիճակի հարցերով Հատուկ զեկուցող, Մարգարետ Սեկագեյայի զեկույց, Հավելված, Առաքելություն Հայաստան. 2010 թ. դեկտեմբեր, ՄԱԿ փաստաթուղթ. A/HRC/16/44/Add.2, ¶ 56, p. 13. http://www2.ohchr.org/english/bodies/hrcouncil/docs/16session/A-HRC-16-44-Add2.pdf

[2] Բերթելսման Շիֆթունգի փոփոխության ինդեքս (BTI) 2012, *BTI 2012 — Հայաստանի վերաբերյալ զեկույց.* Gütersloh: Bertelsmann Stiftung, 2012, http://www.btiproject.de/fileadmin/Inhalte/reports/2012/pdf/BTI%202012%20Armenia.pdf

[3] ԵԽԽՀ 1837 (2011 թ.) բանաձևում Վեհաժողովը նշել է, որ «մտահոգված է Հայաստանի դատական համակարգի գործունեությամբ և անկախության պակասով, որը խոչընդոտում է անկողմնակալ իրավարար լինելու իր դերին: Վեհաժողովը նաև մտահոգված է Հայաստանի դատական համակարգի համատարած կոռումպացվածության վերաբերյալ մշտական հաղորդումների և պնդումների առնչությամբ: Այս առնչությամբ Վեհաժողովը ողջունում է այն կարևորությունն ու առաջնահերթությունը, որ իշխանությունները տալիս են դատական համակարգի բարեփոխումներին՝ հատկապես դրա անկախության ապահովման առումով: Վեհաժողովը համարում է, որ դատական համակարգի բարեփոխումը չի կարող իրականացվել միայն օրենսդրական փոփոխությունների միջոցով և պետք է ուղեկցվի դրանց իրականացման համապարփակ քաղաքականությամբ, որի նպատակն է հասնել գոյություն ունեցող մտածելակերպի և պրակտիկայի փոփոխության»: Բանաձև նաև մտահոգություն է հայտնել ոստիկանության դաժանության և վատ վարքի վերաբերյալ հաղորդումների առնչությամբ և հորդորել է իշխանություններին ավելի մեծ ջանքեր գործադրել ոստիկանության կողմից չարաշահումների ու վատ վերաբերմունքի վերացման ուղղությամբ: ԵԽԽՎ 1837 (2011) Բանաձև: «Ժողովրդավարական ինստիտուտների գործառույթը Հայաստանում», 2011 թ., http://assembly.coe.int/ASP/Doc/XrefViewHTML.asp?FileID=18032&Language=EN

2012 թ. Եվրոպական խորհրդարանի Հայաստանին ուղղված առաջարկություններում:[4]

2011 - 2012 թթ. բազմաթիվ իրավապաշտպաններ են ենթարկվել հետապնդումների, բռնությունների և ճնշումների: Թեև կառավարությունն ընդհանուր առմամբ չի խոչընդոտել իրավապաշտպանների գործունեությանը, կառավարությունը հետապնդել է կոնկրետ իրավապաշտպան կազմակերպությունների և իրավապաշտպանների, այդ թվում նաև լրագրողների[5], մինչդեռ Եվրոպական խորհրդարանը կոչ է արել կառավարությանը անվտանգ միջավայր ապահովել հետաքննող լրագրության համար:[6] Բռնություններ և ճնշումներ իրականացնողների մի մասն էլ եղել են անհատ քաղաքացիներ՝ մասնավորապես ազգայնական խմբերի և իշխանամետ հասարակական կազմակերպությունների անդամներ: Բացի այդ, իրավապաշտպանները ենթարկվել են բռնության և կամայական ազատազրկման խաղաղ հավաքների, ցույցերի, բողոքների և երթերի մասնակցելու համար: Կառավարությունը որևէ քայլ չի ձեռնարկել կանխելու այս բռնությունները կամ պատժելու մեղավորներին: Իրավապաշտպանների նկատմամբ ճնշումներն ու հետապնդումները հատկապես գերակշռել են 2012 թ. մայիսի ընտրություններից առաջ և հետո: Հասարակական կազմակերպությունները քննադատել են ընտրական գործընթացը, նշելով, որ այն ստվերվել է կաշառքով, վարչական ռեսուրսների չարաշահմամբ, հանրային և մասնավոր ոլորտներում աշխատողների քաղաքական ճնշումներով ու հետապնդումներով և բազմաթիվ այլ անօրինական «հնարքների» կիրառմամբ:[7]

2011-2012 թթ. կառավարությունը փորձել է նաև բացասական քարոզչություն իրականացնել իրավապաշտպանների նկատմամբ և հրապարակայնորեն քննադատել է մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անհատների և կազմակերպությունների՝ հատկապես կենտրոնանալով իրավապաշտպանների արտասահմանյան ֆինանսավորման վրա: Իրավապաշտպաններին

---

[4] ԵՄ –Հայաստան ասոցացման համաձայագրի վերաբերյալ եվրոպական խորհրդարանի 2012 թ. առաջարկություններն «ընդգծում են, մասնավորապես դատական իշխանությունների անկախության կարևորությունը... վստահելի դատական ընթացակարգեր, որոնք երաշխավորում են արդար դատաքննություն և արդարադատության հասանելիություն բոլոր քաղաքացիների համար, հետաքննող լրագրողների համար անվտանգ մթնոլորտ, տեղեկատվության և անկախ ու սոցիալական մեդիայի հասանելիություն և կալանավայրերում ցանկացած խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելում»: Եվրոպական խորհրդարանի 2012 թ. ապրիլի 18-ի բանաձև, որը պարունակում է ԵՄ-Հայաստան ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների առնչությամբ եվրոպական խորհրդարանի առաջարկությունները Խորհրդին, Հանձնաժողովին և Եվրոպայի արտաքին գործողության ծառայությանը, փաստաթուղթ. 2011/2315(INI), http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?type=TA&reference=P7-TA-2012-0128&language=EN&ring=A7-2012-0079.

[5] ԱՄՆ պետքարտուղարությունը ներկայացնում է «Բանակն իրականում» նախաձեռնությունը և Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, որպես երկու խմբեր, որոնք հետապնդվում են Հայաստանի կառավարության կողմից: Այս խմբերի հետապնդման օրինակները նշված են սույն զեկույցում: ԱՄՆ պետքարտուղարության ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո, Մարդու իրավունքների զեկույց 2011 թ. Հայաստան, էջ 29 http://photos.state.gov/libraries/armenia/231771/PDFs/hr2011_arm.pdf

[6] .”Եվրոպական խորհրդարանի 2012թ. ապրիլի 18-ի բանաձև, *տես ծթ.* 4.

[7] “ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, 2012 Հայաստանում Խորհրդարանական ընտրությունների մասին”, Գործընկերություն հանուն բաց հասարակության, 2012թ. մայիսի 11, http://www.partnership.am/am/Statements/38416

հեղինակազարկելու համար պետական պաշտոնյաները, պատգամավորները և պետական լրատվամիջոցների ներկայացուցիչները հիմնվում էին ազգային գաղափարախոսության վրա և կասկածի տակ էին դնում այն անձանց ծագումը և շարժառիթները, որոնք քննադատում էին կառավարության քաղաքականությունը: Պաշտոնյաները հաճախ շեշտում էին, որ ազգային գաղափարախոսության պահպանությունը հրատապ է հայ հասարակության համար և որ քաղաքացիների գործողությունները պետք է համահունչ լինեն ազգային շահերին, ազգային անվտանգությանը և ազգային ավանդույթներին: Ազգային գաղափարախոսության այս աղոտ հասկացությունը օգտագործվել է հեղինակազրկելու կամ վերացնելու այն բոլոր գաղափարներն ու կարծիքները, որոնք չեն համապատասխանել իշխող կուսակցության շահերին:

ՀԿ-ների համագործակցությունը լրատվամիջոցների հետ շարունակել է սահմանափակ լինել 2011 և 2012 թթ.[8] և լրատվամիջոցների կողմից հասարակական կազմակերպությունների գործունեության լուսաբանումը նվազել է նշված ժամանակահատվածում: Հայաստանի լրատվամիջոցների մեծ մասը վերահսկվում են կառավարության կողմից և բարյացկամ են տրամադրված կառավարության նկատմամբ և այդ լրատվամիջոցները շարունակել են խեղաթյուրել իրավապաշտպանների գործողությունները և թշնամություն ցուցաբերել առանձին իրավապաշտպանների և իրավապաշտպան կազմակերպությունների նկատմամբ:[9] Այնուամենայնիվ, իրավապաշտպանները կարողացել են օգտագործել առցանց լրատվամիջոցները առանց գրաքննության իրենց գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու և աջակիցներին մոբիլիզացնելու համար:[10] Ֆեյսբուքը հատկապես արժեքավոր գործիք է հանդիսացել, և հանրային օրակարգի նկատմամբ ՀԿ-ների ազդեցությունը նշանակալիորեն ավելացել է նշված ժամանակահատվածում:

---

[8] Այս առումով, ՄԱԿ-ի Իրավապաշտպանների իրավիճակի հարցերով հատուկ զեկուցողը հայտարարել է, որ «քաղաքացիական հասարակական կազմակերպությունների գործունեության մասին իրազեկվածությունը շատ ցածր է: Լրատվամիջոցները հաճախ անտեսում են ՀԿ-ների նախաձեռնությունները, զեկույցները և մամլո ասուլիսները, ավելին, ՀԿ-ները հաճախ զրկված են լրատվամիջոցների հասանելիությունից»: *տե՛ս ծթ.* 1 ¶ 56, էջ 13

[9] Իրավապաշտպանների իրավիճակի մասին ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը նշում է «խորին մտահոգությամբ, որ իրավապաշտպանները պետության կողմից վերահսկվող լրատվության միջոցներում պարբերաբար ներկայացվում են խեղաթյուրված կերպով և նույնիսկ վարկաբեկվում են: Իրավապաշտպանները նորից ու նորից պիտակվում են որպես օտարերկրյա գործակալներ, լրտեսներ, դրածոներ և 5-րդ շարասյուն»: *տե՛ս ծթ.* 1 ¶ 56, էջ 13

[10] Ամերիկայի միացյալ նահանգների միջազգային զարգացման գործակալության Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի ժողովրդավարության, կառավարման և սոցիալական անցման գրասենյակ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի ՀԿ-ների կայունության ինդեքս 2010 թ., 14-րդ հրատարակություն – Նոյեմբեր 2011 թ. http://program.counterpart.org/Armenia/wp-content/uploads/2011/02/USAID-NGO-Sustainability-Index-PDF.pdf

II. ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ 2011-2012 ԹԹ.

Ա. Հարձակումներ և սպառնալիքներ իրավապաշտպանների նկատմամբ

2011-2012 թթ. իշխանությունները ֆիզիկական բռնություններ են կիրառել իրավապաշտպանների նկատմամբ, որոնք մասնակցել են խաղաղ հանրահավաքների և ցույցերի: Իշխանությունները նաև հրապարակայնորեն իրենց աջակցությունն են հայտնել անհատ քաղաքացիների կողմից ճնշումներին և բռնարարքներին: Մասնավորապես, նշված ժամանակահատվածում բռնության և հետապնդումների են ենթարկվել լրագրողները, ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանները, հակամարտության լուծման ջատագովները, բնապահպանները և իրավաբանները:[11]

<u>Լրագրողներ</u>

2011 թ. մի շարք լրագրողներ պնդել են, որ իրենց մասնագիտական գործողություններն իրականացնելիս ենթարկվել են ֆիզիկական բռնության: Թեև դեպքերի վերաբերյալ քննություն է սկսվել, սակայն այս դեպքերի առնչությամբ որևէ մեղադրանք չի առաջադրվել, և հանցագործները քրեական պատասխանատվության չեն ենթարկվել:

2012 թ. արձանագրվել են ֆիզիկական բռնության դեպքեր մայիսի խորհրդարանական ընտրությունները լուսաբանող լրագրողների նկատմամբ: ԶԼՄ-ների նկատմամբ ճնշումների 16 դեպք է արձանագրվել մինչև 2012 թ. հուլիսը, որոնցից 4-ը տեղի են ունեցել խորհրդարանական ընտրությունների օրը:[12] Լրագրողները բողոքել են, որ տեղամասերում իրենցից վերցրել կամ առգրավել են տեսաձայնագրող սարքերը, ինչը խոչընդոտել է գործընթացի մասին հանրային տեղեկատվություն տարածելու միջոցով ընտրական ազատ և թափանցիկ գործընթացներին նպաստելու նրանց կարողությանը:

> *2012 թվականի մայիսի 5-ին Գյումրու թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները ֆիզիկական բռնություններ են կիրառել կառավարության քննադատությամբ հայտնի "Գալա" հեռուստաընկերության նկարահանող խմբի անդամների նկատմամբ:[13] Նկարահանող խմբի անդամները դիտարկում և լուսաբանում էին ընտրական գործընթացը: 2012 թ. մայիսի 6—ին՝ քվեարկության օրը, Երևանի ընտրական տեղամասերից մեկի բակում նկարահանումներ կատարելիս անհայտ անձը հարվածել է "Ազատություն" ռադիոկայանի թղթակցի ձեռքին և փորձել է խլել*

[11] Նմանապես, հատուկ զեկուցողը հայտարարել է իր 2010 թ. զեկույցում, որ «Հայաստանում իրավապաշտպանների ամենախոցելի խմբերից են ԼԳԲՏ անձանց իրավունքների հարցերով զբաղվողները, կանանց մարդու իրավունքների պաշտպանները, հեռավոր վայրերում աշխատող ՀԿ-ները և բնապահպան ակտիվիստները» *տես ծթ.* 1 ¶ 60 էջ 13:

[12] *ԽԱՊԿ երկրորդ եռամսյակային զեկույց (ապրիլ-հունիս 2012թ.)*, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, https://docs.google.com/viewer?url=http%3A%2F%2Fkhosq.am%2Fwp-content%2Fuploads%2F2012%2F07%2F2-CPFE-quarterly-report-2012.arm_3.doc

[13] Գալայի լրագրողի հաղորդման հիման վրա նախապատրաստվում են նյութեր, Հետք, Հետաքննող լրագրողներ, 2012թ. մայիսի 14, http://hetq.am/arm/news/14409/materials-being-prepared-on-report-made-by-%E2%80%9Cgala%E2%80%9D-tv-journalist.html

վերջինիս տեսախցիկը:[14] Թեև լրագրողները բողոքներ են ներկայացրել նշված երկու միջադեպերի առնչությամբ, իշխանությունները քրեական գործ չեն հարուցել մեղավորների նկատմամբ:

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպաններ

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանները հատկապես խոցելի են եղել առանձին քաղաքացիների և ազգայնական խմբերի կողմից հարձակումների, սպառնալիքների և հետապնդումների նկատմամբ: Մի շարք հայտնի քաղաքական գործիչներ աջակցել են այդ գործողություններին՝ իրենց գործողություններն արդարացնելու համար օգտագործելով ազգայնական հռետորաբանությունը, որն էլ իր հերթին հանգեցրել է ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանների հետագա հետապնդումների:

2012 թ. մայիսի 8-ին հրդեհվել է D.I.Y ակումբը, որը պատկանում էր ԼԳԲՏ ակտիվիստի: Ազգային ժողովի մի քանի պատգամավորներ հրապարակայնորեն իրենց աջակցությունն են հայտնել հարձակմանը և երկու երիտասարդներին, որոնք ձերբակալվել էին այդ առնչությամբ: Պատգամավորներից մեկը հայտարարել է, որ հարձակվողները լիովին արդարացի են գտնվել, մեկ այլ պատգամավոր զորակցել է հարձակվողներին «ազգային արժեքներն ու հավատը վարկաբեկողների դեմ պայքարելու գործնական քայլեր՝ ձեռնարկելու համար»: Արդյունքում հասարակության մեջ ձևավորվել է ագրեսիվ վերաբերմունք ԼԳԲՏ անձանց նկատմամբ, ակումբը շարունակել է ենթարկվել հարձակումների, և քաղաքացիական հասարակության այն ակտիվիստները, որոնք հրապարակայնորեն աջակցում էին թե՛ ակումբին, թե՛ դրա սեփականատերերին, նույնպես ենթարկվել են հետապնդումների:[15]

2012 թ. մայիսի 12-ին երկու հասարակական կազմակերպություն՝ «Հանրային տեղեկատվության և գիտելիքի կարիք»-ը և «Կանանց ռեսուրսային կենտրոն»-ը Երևանում կազմակերպել են

---

[14] Էրեբունիում «Ազատություն» ռադիոկայանի լրագրողի նկատմամբ բռնություն է կիրառվել, 2012թ. մայիսի 6, http://news.am/arm/news/104374.html

[15] DIY-ի միջադեպը քննարկումների տեղիք է տալիս. ԱԺ փոխխոսնակն ասում է՝ ատելության հողի վրա կատարված հանցագործությունը «ճիշտ է և արդարացված», 2012թ. մայիսի 18, ArmeniaNow. http://www.armenianow.com/hy/society/38168/diy_gay_lesbian_club_bomb_attack_yerevan_reactions. «Հայաստանում լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր (ԼԳԲՏ) անձանց իրավունքների խախտումներ: Մարդու իրավունքների կոմիտեի 105-րդ նստաշրջանի քննարկմանը ներկայացված այլընտրանքային զեկույց, Ժնև, 2012թ. հուլիս» http://www2.ohchr.org/english/bodies/hrc/docs/ngos/LGBT_Armenia_HRC105.pdf. «Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի հայտարարությունը Հայաստանում ծավալվող այլատյացության և անհարդուժողականության վերաբերյալ», Արևելյան գործընկերության տեղեկագիր Հայաստան, 2012 հունիսի 1, http://eaparmenianews.wordpress.com/2012/06/05/թողարկում-105

բազմազանության երթ՝ նվիրված ՄԱԿ-ի երկխոսության և զարգացման համաշխարհային օրվան: Երթի նախօրեին լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում սխալ տեղեկատվություն է տարածվել, որ իրականացվում է «գեյ շքերթ» և երթի ընթացքում հայտնվել է երիտասարդ ազգայնականների մի մեծ խումբ, որոնք հայրենասիրական երգեր երգելով և հոմոֆոբիկ կոչերով հարձակվել են երթի մասնակիցների վրա:[16] Միջադեպից հետո «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ ղեկավարները, որպես երթի կազմակերպիչներ և ակումբի դեպքը վարող կազմակերպության առաջնորդներ, ենթարկվել են հետապնդումների և սպառնալիքների: Հետապնդողները փորձել են ճնշել նրանց անուղղակի սպառնալիքներով և վրեժխնդրությամբ՝ բառացի հայտարարելով՝ «Զգույշ եղեք, չգիտեք, թե ձեզ հետ ինչ կլինի, եթե չդադարեք ձեր ակտիվիզմը» և «Թողեք D.I.Y. գործը, թե չէ կզղջաք»:"[17]

Ազգայնական խմբերը ճնշումներ են գործադրել նաև այն վայրերի վրա, որոնք համաձայնել են ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ հանրային միջոցառումներ հյուրընկալել:

2012 թ. հոկտեմբերին Հայաստանում Գերմանիայի դեսպանատունը և Եվրոպական միության պատվիրակությունը կազմակերպել են Սերբիայում ԼԳԲՏ անձանց խնդիրների մասին պատմող ֆիլմի ցուցադրությունների շարք: «Հայազն կազմակերպությունը», որը հայտնի է իր ազգայնական մտածելակերպով՝ միջոցառման դեմ բողոքի ցույց է անցկացրել Գերմանիայի դեսպանատան դիմաց: Ցույցի մասնակիցներն այնուհետև երթով շարժվել են դեպի այն երկու վայրերը, որտեղ ֆիլմերը պետք է ցուցադրվեին: Արդյունքում երկու վայրերն էլ չեղյալ են հայտարարել ցուցադրությունը: Մեկ այլ վայր հետագայում համաձայնել էր ցուցադրել ֆիլմը, սակայն չեղյալ է հայտարարել միջոցառումը առանց կազմակերպիչներին որևէ բացատրություն տալու: Զեկույցի պատրաստման ժամանակ կազմակերպիչներն այլ վայրեր էին փնտրում ֆիլմի ցուցադրության համար:[18]

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանները սպառնալիքների պատճառով չեն կարողացել արտահայտել իրենց կարծիքը և մասնակցել հանրային միջոցառումների:

---

[16] «Բազմազանության շքերթը բազմազան է եղել», «A1+» Հեռուստաընկերություն, 2012թ. մայիսի 21, http://www.a1plus.am/am/social/2012/05/21/diversity-march

[17] Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ.

[18] "ԵՄ կողմից նախաձեռնած սերբական սեռական փոքրամասնությունների մասին «Պարադա» դրամայի ցուցադրումը, հասարակական դժգոհություն է առաջացնում Երևանում", Արմինֆո, 2012թ. հոկտեմբերի 10, http://www.arminfo.info/index.cfm?objectid=8D84FF80-12F4-11E2-B1ACF6327207157C

2012 թ. ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպան և ՓԻՆՔ Հայաստան կազմակերպության նախագահ Մամիկոն Հովսեփյանը սպառնալիքներ է ստացել ԱՄՆ-ում Հայ յեղափոխական դաշնակցության արևելյան շրջանի կենտրոնական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Հայերը և առաջադեմ քաղաքականությունը» համաժողովի ժամանակ:[19] Սպառնալիքների պատճառով Հովսեփյանին անձնական անվտանգության ապահովման միջոցներ են տրամադրվել: Համաժողովի երկրորդ օրը ՀՅԴ արևմտյան շրջանի երկու անդամներ հայտնել են Հովսեփյանին, որը պետք է մասնակցեր համաժողովին՝ որպես խոսնակ, որ իր անվտանգությունից ելնելով՝ իրեն չի թույլատրվում ելույթ ունենալ: Հետագայում Հովսեփյանը տեղեկացել է, որ իրականում իրեն չի թույլատրվել ելույթ ունենալ, որովհետև ՀՅԴ-ն ինստիտուցիոնալ խնդիրներ կարող էր ունենալ, եթե թույլատրեր իրեն հանդես գալ որպես խոսնակ:[20]

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանները նաև ճնշումների ու հետապնդումների են ենթարկվել:

2012 թ. նոյեմբերին ՓԻՆՔ Հայաստանի անձնակազմը նկատել է, որ իրենց հետևում են այն երիտասարդները, որոնք մայիսին հարձակվել են Բազմազանության շքերթի վրա: Երբ ՓԻՆՔ-ի աշխատակիցները լքել են գրասենյակը ճաշին կամ օրվա վերջում, նրանք նկատել են, որ այդ երիտասարդները հայտնվել են նույն փողոցներում և նույն սրճարաններում: Սրճարաններում հարձակվողները զբաղեցրել են կողքի սեղանը և ակնդետ նայել ՓԻՆՔ-ի աշխատակիցներին, ինչից կարելի է ենթադրել, որ նրանց ներկայությունը ուղղակի զուգադիպություն չէր:

Հակամարտության լուծման ջատագովներ

Հարավային կովկասում հանդուրժողականության և խաղաղության կոչ անող ակտիվիստները, որոնք փորձել են աջակցել Հայաստանի և հարևանների միջև շարունակվող հակամարտության լուծմանը, նույնպես հետապնդումների են ենթարկվել: Իշխանությունները չեն քննել այս դեպքերը:

2012 թ. ապրիլի 12-ին Խաղաղարար նախաձեռնությունների կովկասյան կենտրոնը փորձել է ադրբեջանական ֆիլմերի փառատոն անցկացնել Գյումրիում: Մոտ 50 ցուցարարներից բաղկացած մի խումբ ազգայնական գաղափարախոսության հիմունքներով բողոքել

[19] Կոլումբիա Համալսարանի Հայկական ընկերակցությունը և ՀՅԴ Արևմտյան շրջանը հանդիսացել են համաժողովի համահովանավորները:

[20] «Հայկական առաջադեմ քաղաքականության համաժողովն արձանագրում է հաջողություններ և ձախողումներ» ianyan mag, անկախ հայկական հրատարակչություն, 2012 թ. հոկտեմբերի 9, http://www.ianyanmag.com/2012/10/09/progressive-politics-conference-sees-highs-and-lows/

է պլանավորված փառատոնի անցկացման դեմ: Ցուցարարները փակել են փառատոնի անցկացման վայրի մուտքը և սպառնացել են փառատոնի կազմակերպիչներին ու հյուրընկալողներին և ֆիզիկական բռնություն են կիրառել Կենտրոնի ներկայացուցիչների նկատմամբ: Բողոքի պատճառով Կենտրոնը ստիպված է եղել վերջին պահին չեղյալ հայտարարել միջոցառումը:[21]

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը պլանավորել էր հյուրընկալել նույն փառատոնը 2012 թ. ապրիլի 17-ին: Միջոցառման նախորդ օրը կազմակերպության գրասենյակը հարձակման է ենթարկվել: Գրասենյակի դիմաց հավաքված ցուցարարները քարեր և ձվեր են նետել, որի արդյունքում կոտրվել է գրասենյակի ապակին և վիրավորվել է կազմակերպության աշխատակիցներից մեկը: Ոստիկանությունը ոչ մի քայլ չի ձեռնարկել ապահովելու կազմակերպության աշխատակիցների անվտանգությունը, թեև կազմակերպությունը տեղեկացրել է ոստիկանությանը գրասենյակում տիրող իրավիճակի մասին: Իշխանությունները նաև քրեական պատասխանատվության չեն ենթարկել հարձակվողներին:[22]

Բնապահպաններ

2011 և 2012 թթ. իշխանությունները խոչընդոտել են բնապահպանական բողոքի ակցիաների իրականացմանը: 2012 թ. նախընտրական շրջանում քաղաքական կուսակցությունները բռնի կերպով ցրելով ցուցարարներին՝ փորձել են սահմանափակել իրավապաշտպանների մասնակցությունը նախընտրական հանրահավաքներին և իրենց ասելիքը փոխանցել ընտրողներին:

2012 թ. ապրիլի 27-ին Վանաձորում «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն կազմակերպել է խաղաղ ցույց ընդդեմ Թեղուտի հանքերի շահագործման խորհրդարանական ընտրությունների նախընտրական հանրահավաքի ժամանակ, որը վարել է Հայաստանի նախագահ և Հանրապետական կուսակցության առաջնորդ Սերժ Սարգսյանը: Հանրապետական կուսակցության տեղական գրասենյակի երիտասարդ անդամները միջամտել են և

[21] «Փառատոնի հետևանքները. Վանյանի կազմակերպած ադրբեջանական ֆիլմերի ցուցադրությունն անցկացվեց Գյումրուց դուրս գտնվող ռեստորանում», 2012թ. ապրիլի 13, http://www.armenianow.com/hy/arts_and_culture/37303/azerbaijani_film_festival_demonstration_fail_gyumri

[22] Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հայտարարությունը գրասենյակի վրա հարձակման մասին», 17 Ապրիլ, 2012, http://hcav.am/events/hքա-վանաձորի-գրասենյակի-հայտարարութ-7. "Մտահոգված Հայաստանում իրավապաշտպան կազմակերպությունների վրա հարձակումներով", Մարդու իրավունքների տան ցանցի և Իրավապաշտպանների Հարավկովկասյան Ցանցի հայտարարություն, 2012թ. մայիսի 18, http://humanrightshouse.org/Articles/18040.html

հրամայել ցուցարարներին հեռանալ տարածքից:[23]

2012 թվականի ապրիլի 30-ին «Թեղուտի պաշտպանության նախաձեռնություն» խմբի անդամները ցուցապաստառներով փորձ են արել մասնակցել Երևան քաղաքի Ավան համայնքում ՀՀ ազգային ժողովի նախընտրական քարոզարշավի ընթացքում կազմակերպված հավաքին, որին ներկա է եղել Հանրապետական կուսակցության առաջնորդ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Նախագահի կողմնակիցները արգելել են նրանց մասնակցել հանդիպմանը և պատռել են վերջիններիս պաստառները:[24]

Իրավաբաններ

Մարդու իրավունքներով զբաղվող իրավաբանները նույնպես հետապնդվել են:

2011 թվականի հունվարին հարձակման է ենթարկվել իրավաբան Արտակ Զեյնալյանի գրասենյակը: Զեյնալյանի համակարգչի էկրանը և ստեղնաշարը գողացվել են, մինչդեռ գրասենյակում եղած փողին և արժեքավոր իրերին ձեռք չի տրվել: Գրասենյակի վրա հարձակում իրականացնողները խուզարկել են այն և փնտրել փաստաթղթեր:[25] *Զեյնալյանը ներկայացնում է 2008 թ. մարտի 1-ին հետընտրական ցույցերի ժամանակ ոստիկանության կողմից կիրառված ուժի հետևանքով վիրավորված, մահացած և ձերբակալված անձանց շահերը: Զեյնալյանը նաև ներկայացնում է 2010 թվականին Չարենցավանի ոստիկանությունում կասկածելի հանգամանքներում մահացած Վահան Խալաֆյանի շահերը:*

Բ. Իրավապաշտպանների կամայական հարցաքննություն և ազատազրկում

Ոստիկանությունը կամայականորեն ազատազրկել է իրավապաշտպանների, որոնք պաշտպանել են մարդու իրավունքները՝ մասնակցելով մարդու իրավունքների հետ կապված ցույցերի և հավաքների:

2011 թ. հոկտեմբերի 27-ին «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնությունը կազմակերպել է խաղաղ ցույց ՀՀ Կառավարության շենքի դիմաց՝ ընդդեմ բանակում իրականացվող բռնությունների՝ պահանջելով զինծառայողների՝ ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի վերաբերյալ իրական

[23] "Այսօր մենք կերտում ենք մեր և մեր երեխաների ապագան..." (տեսանյութ), Խաղաղության երկխոսություն,2012թ. ապրիլի 28, http://www.peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=503&TopicId=5&Language=Arm

[24] h.hraparak.am, Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն. www.hraparak.am/62521/. Նախաձեռնության գործունեության վերաբերյալ թարմացումները հայերեն՝ http://www.ecolur.org/hy/news/teghout/46/

[25] «Կրկին ներխուժել են «Հանրապետության» գրասենյակ», armtown.com, 2011թ. հունվարի 10, http://www.armtown.com/news/am/a1p/20110110/2011011028/

վիճակագրության տրամադրում և այդ մահվան դեպքերի պատշաճ քննության իրականացում:[26] *Սակայն ոստիկանները թույլ չեն տվել, որպեսզի ցույցը կայանա նախատեսված վայրում, իսկ ցույցի մասնակիցներից իրավապաշտպան Լալա Ասլիկյանը ձերբակալվել և մի քանի ժամ պահվել է ոստիկանության բաժանմունքում՝ առանց փաստաբանի հանդիպելու հնարավորության:*[27]

2012 թվականի մարտի 30-ին հանրային «Հ1» հեռուստաընկերության շենքի դիմաց բողոքի ակցիա իրականացնելու համար ձերբակալվել է Երվանդ Կարապետյանը: Ակցիայի ժամանակ Կարապետյանը պարզել էր մի պաստառ, որով հայտարարում էր, որ հեռուստաընկերությունը խախտում է օրենքը և պահանջում էր ցուցադրել 2008 թվականի մարտի 1-ի ցույցերի մասին պատմող ֆիլմը: Ձերբակալելուց հետո՝ ոստիկանությունը Կարապետյանին տեղափոխել է հոգեբուժարան, որտեղ նա հոգեբուժական փորձաքննության է ենթարկվել: Երեք բժիշկներից բաղկացած խումբը հոգեկան խանգարման որևէ ախտանիշ չի հայտնաբերել և ժամեր անց նա ազատվել է:[28] *Ոստիկանությունը որևէ հիմք չի ունեցել Կարապետյանին հոգեբուժական փորձաքննության ենթարկելու:*[29] *Արդյունքում քաղաքացուն ապօրինաբար ոստիկանություն բերման ենթարկելու կապակցությամբ "Քաղաքացիական հասարակության ինստիտուտ" հասարակական կազմակերպությունը հայտարարություն է տարածել միջադեպի վերաբերյալ և պահանջել է քննություն իրականացնել Կարապետյանի կամայական ազատազրկման փաստի առնչությամբ: Կազմակերպությունն իշխանություններից որևէ արձագանք չի ստացել:*[30]

Ի լրումն, ոստիկանությունն անհիմն մեղադրանքներով հրավիրել է իրավապաշտպաններին հարցաքննության:

---

[26] Դեպքերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար, տես «Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական, քաղաքացիական եւ հասարակական վերահսկողության հնարավորությունները Հայաստանում» ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, http://hcav.am/wp-content/uploads/2012/04/Report.pdf

[27] «Ակտիվիստին ազատ արձակեցին», «A1+» TV, 2011 թ. հոկտեմբերի 27, http://www.a1plus.am/am/politics/2011/10/27/lala-free

[28] Իրավապաշտպանը պատմել է՝ ինչպես էին հոգեբուժարանից ազատում Կարապետյանին, http://www.epress.am/2012/03/31/Իրավապաշտպանը-պատմել-է-ինչպես-էին-հոգ

[29] Ըստ աղբյուրներից մեկի, «Երբ բժիշկները զարմացան և ոստիկաններին հարցրեցին, թե նրանք ինչու ենթադրեցին, որ Կարապետյանը հոգեկան շեղումներ ունի, ոստիկաննն ասաց. «Դե, մենք ահազանգ ենք ստացել և պարտավոր էինք ստուգել», Մարդու իրավունքները Հայաստանում, «Բժիշկները չհաստատեցին ոստիկանության «դիագնոզը»», 2012 մարտի 30, http://hra.am/hy/events/2012/03/30/karapetyan. Մեկ այլ հրապարակման մեջ նշվում է, որ Ըստ ոստիկանության՝ Երվանդ Կարապետյանի տարօրինակ վարքագիծը դրսևորվել է «պաստառը ձեռքին կանգնելով» և «ձեռքերի անկանոն շարժումներով»: Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, «ՔՀԻ–ն պահանջում է քննություն իրականացնել ոստիկանության ապօրինի միջամտության փաստի առթիվ,» 2012թ. ապրիլի 4, http://hra.am/hy/events/2012/04/04/csi

[30] Առավոտ, ՔՀԻ-ն պահանջում է քննություն իրականացնել ոստիկանություն ապօրինի միջամտության փաստի առթիվ, 4 Ապրիլի, 2012, http://www.aravot.am/2012/04/04/55758/

2012 թվականի հունվարի 16-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը հարցաքննության է կանչվել Ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժին: Ոստիկանությունը հայտարարել է, որ կասկածներ ունի, թե Սաքունցը ստիպել է քաղաքացուն ոստիկանության կողմից բռնության ենթարկվելու վերաբերյալ կեղծ ցուցմունք տալ: Հարցաքննությունից հետո ոստիկանությունը Սաքունցին որևէ լրացուցիչ ինֆորմացիա չի տրվել քննության ընթացքի մասին: Միայն կազմակերպության կողմից պաշտոնական գրությունից հետո ոստիկանությունը տեղեկացրել է, որ գործը կարճվել է փաստերի բացակայության պատճառով:[31]

Գ. Սպառնալիքներ իրավապաշտպան կազմակերպությունների նկատմամբ

Քաղաքական գործիչները նաև ուղղակիորեն սպառնացել են իրավապաշտպան կազմակերպություններին, որ նրանց գործողությունները վատ հետևանքներ կունենան հատկապես 2012 թ. նախընտրական շրջանում:

2012 թվականի մայիսին "Բարգավաճ Հայաստան" կուսակցության ներկայացուցիչները հրաժարվել են խոսել Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի դիտորդների հետ: Ներկայացուցիչները հայտնել են, որ իրենք դեմ են կազմակերպության գործունեությանը և իրենց իշխանության գալու պարագայում կդադարեցնեն կազմակերպության գործունեությունը: Նրանցից մեկն ասել է դիտորդներին. «Եթե մենք գանք իշխանության, առաջինն, ինչ մենք կանենք՝ Արթուր Սաքունցին (Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար) Վանաձորից արտաքսելն է».[32]

Դ. Վարկաբեկող քարոզարշավներ ընդդեմ իրավապաշտպանների

Իշխանությունները 2011 և 2012 թթ. օգտագործել են զանգվածային լրատվության միջոցները իրավապաշտպանների մասին կեղծ տեղեկատվություն տարածելու համար՝ փորձելով ազդել իրավապաշտպանների գործունեության հանրային ընկալման վրա և հանրության մեջ կասկած առաջացրել իրավապաշտպանների իրական դրդապատճառների վերաբերյալ: Այս հաղորդագրությունները հաճախ տարածվել են զանգվածային լրատվության առցանց միջոցներով և սոցիալական ցանցերով:

---

[31] «Հելսինկյան Քաղաքացիական ասմբլեայի Վանաձորի գրասենյակ, Ոստիկանությունը հարցաքննության է կանչել Արթուր Սաքունցին», 16 հունվար, 2012, http://hcav.am/events/ոստիկանությունը-հարցաքննության

[32] «2012թ. մայիսի 6-ի Խորհրդարանական ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց, Վանաձոր, 2012," էջ. 28, ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, http://hcav.am/wp-content/uploads/2012/06/Election-obsevration-report-06.05.2012.pdf

2011 թվականից տեղական, ռուսալեզու սոցիալական ցանցերում և էլեկտրոնային մամուլում տարածում են գտել «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը և կազմակերպության ղեկավարին վարկաբեկող մի շարք հոդվածներ: Հոդվածներում Արթուր Սաքունցը մեղադրվում է քաղաքական օրակարգ ունենալու մեջ, ինչպես նաև ասվում է, որ նա «տարածում է գունավոր հեղափոխությունը»: Այնուհետև, հոդվածներում քննադատվում էր կազմակերպության կողմից 2010 թվականից իրականացվող «Երիտասարդների ներգրավումը Հարավային Կովկասի իրավապաշտպանական շարժման մեջ» ծրագիրը, որը ներկայացվել է որպես ուսումնական ճամբար հեղափոխականներ նախապատրաստելու համար՝ իրենց համապատասխան երկրներում հեղափոխություններ կազմակերպելու նպատակով[33]:

Ներկա և նախկին իշխանական պաշտոնյաները զանգվածային լրատվության միջոցներում տրված իրենց հայտարարություններով նպաստել են իրավապաշտպանների վերաբերյալ նման կարծիքի ձևավորմանը: Պաշտոնյաները կենտրոնացել են այն փաստի վրա, որ օտարերկրյա կառավարությունները հաճախ ֆինանսավորում են իրավապաշտպան կազմակերպություններին և այդ փաստն օգտագործելով՝ փորձել են վարկաբեկել այդ կազմակերպություններն ու նրանց աշխատանքը: Իրենց մեկնաբանություններում, պաշտոնյաները ընդհանուր անվստահություն են հայտնել օտարերկրացիների նկատմամբ և կասկածի տակ դրել իրավապաշտպանների հայրենասիրությունն ու նվիրվածությունը:

2011 թվականի հոկտեմբերին պաշտպանության նախկին փոխնախարար Վլադիմիր Գասպարյանը երկու հարցազրույց է տվել, որոնցում նա քննադատել է այն իրավապաշտպաններին, ովքեր արդար դատաքննություն են պահանջում բանակում մարդու իրավունքների խախտման դեպքերի առնչությամբ.[34] Հարցազրույցներից մեկում Գասպարյանն ասել է. «Ոնց կարող է ցավալ մարդու սիրտ մի երկրի բանակի համար, երբ ֆինանսավորվում ու աշխատավարձ է ստանում ուրիշ երկրներից: Ոնց կարող է մարդու սիրտ ցավա, երբ նա մտածում է՝ ինչքան աղմկահարույց, ինչքան վատ դեպք պատահի, էնքան լավ է, որովհետև դրա վրա ավելի շատ փող կարող է աշխատի: Այդ մարդիկ, ովքեր դրանով զբաղվում են անհայրենիք, աներկիր, անշնորհք, ուրիշին դուր գալու, ուրիշին ծառայելու, նոքարի, սեփական

[33] blogNews, Ցնցող բացահայտում Արթուր Սաքունցի մասին. ինչով է իրականում զբաղված Հելսինկյան ասոցիացիան, http://blognews.am/arm/news/16077/cnc. Ծանոթություն, ՀՔԱ-ն և ՀՀԱ-ն հաճախ շփոթում են, երբեմն միտումնավոր

[34] 2011թ. հոկտեմբերի 15-ին Գասպարյանը "Զինուժ" հեռուստահաղորդման հյուրն էր: 2011թ. հոկտեմբերի 17-ին նա հարցազրույց է տվել www.hraparak.am-ին:

արժանապատվությունը չունեցող երևույթներ են»։[35]

Իշխանության կողմից վերահսկվող զանգվածային լրատվության միջոցները նմանատիպ հայտարարություններ են արել իրավապաշտպան կազմակերպությունների և իրավապաշտպանների մասին։

2011թ. հոկտեմբերի 11-ին Հանրային Հեռուստաընկերության տեղեկատվական-վերլուծական հաղորդումների տնօրեն և հանրային հեռուստաընկերության (Հ1) Տեսանկյուն հաղորդաշարի հաղորդավար Գևորգ Ալթունյանը քննադատել է մի շարք իրավապաշտպանների ներկայացրած հայտարարությունը։ Հայտարարությամբ պահանջվել էր նախագահ Սերժ Սարգսյանի հրաժարականն այն հիմնավորմամբ, որ նա անտեսում է բանակում բռնությունների, վատ վերաբերմունքի փաստերը և ոչ մարտական պայմաններում գրանցված մահացության դեպքերի մեծ թիվը։ Հաղորդման ընթացքում Ալթունյանը հայտարարել է, որ իրավապաշտպանները փորձել են դավաճանություն պարունակող գործողություններ իրականացնել։ Ալթունյանը նաև պնդել է, որ քանի որ օտարերկրյա կառավարությունները ֆինանսավորում են իրավապաշտպան կազմակերպություններին, այդ կազմակերպություններն իրավունք չունեն ներկայացնել քաղաքական պահանջներ։[36]

2011 թվականի հոկտեմբերի 16-ին «Հ1 Առաջին Ալիք» հեռուստաընկերության եթերով ներկայացվել է ռեպորտաժ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի և Գյումրիի լրագրողների "Ասպարեզ" ակումբի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանի մասին։ Մինչ այդ Սաքունցը և Բարսեղյանը անդրադարձել են զինված ուժերում խաղաղ պայմաններում տեղի ունեցած մահվան դեպքերին և պահանջել են այդ մահվան դեպքերի արդար քննությունը։ Ռեպորտաժը խեղաթյուրված կերպով ներկայացրել է կազմակերպությունների գործունեությունը և նրանց իրականացրած ծրագրերը, վկայակոչելով ծրագրերի նկարագրություններից պատահական հատվածներ և ներկայացնելով դրանք որպես փողի և ռեսուրսների անմիտ վատնում։ Ռեպորտաժում ակտիվիստները նաև անվանարկվել են որպես «հայրենիքի դավաճաններ», «գրանտակերներ», «օտարերկյա պատվերներ կատարողներ»։[37]

---

[35] ՀՔԱ Վանաձորի գրասենյակն ընդդեմ Վլադիմիր Գասպարյանի, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2011թ. նոյեմբերի 11, http://hcav.am/wp-content/uploads/2012/06/Election-obsevration-report-06.05.2012.pdf

[36] Տեսանկյուն հաղորդաշար, http://www.youtube.com/watch?v=tnSXNbkrN48&feature=plcp

[37] Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Հայտնի իրավապաշտպանի ու հեռուստամեկնաբանի վեճը շարունակվում է, 24 Հոկտեմբերի, 2011, http://hcav.am/events/հայտնի-իրավապաշտպանի-ու-հեռուստամե

2012 թ. հոկտեմբերի 18-ին Հանրային հեռուստաընկերության Տեսանկյուն հաղորդաշարի շրջանակներում հաղորդավար Գևորգ Ալթունյանը քննադատել է ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ հարցումը, որն իրականացվել է ՓԻՆՔ Հայաստանի կողմից: Հաղորդավարը հանդես է եկել հոմոֆոբիկ հայտարարություններով, որոնք մասնավորապես վերաբերել են այն անձանց, որոնք իրենց նույնականեցնում են որպես տրանսգենդեր: Նա նաև մեկնաբանություն է արել, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքն "ակնհայտ է, փառք Աստծո" և հայտարարել, որ ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությունը ազգի գոյատևման սպառնալիք է"[38]:

Առցանց միջոցները նույնպես օգտագործվել են պաշտպաններին վարկաբեկելու և նրանց նկատմամբ բռնություն հրահրելու համար:

ՓԻՆՔ Հայաստանի և «Կանանց ռեսուրսային կենտրոն»-ի կողմից 2012թ. մայիսին բազմազանության երթ անցկացնելու նախօրեին, սոցիալական ցանցերում և առցանց լրատվության միջոցներում տեղեկատվություն էր տարածվել, որ կազմակերպությունները նախապատրաստում էին «գեյ շքերթ»: Իրենց առցանց հայտարարություններում ազգայնականները խրախուսել են մարդկանց դուրս գալ փողոց և կանխել երթը: Նրանք հայտարարել են, որ երթի կազմակերպիչները «արևմտյան անբարոյական արժեքները Հայաստան են բերում» և այն անվանում բազմազանություն: Նրանք նաև կոչ են արել «այրել գեյերին», «մաքրել երկիրը անբարոյականությունից» և «գեյերին արտաքսել երկրից»:

Ե. Իրավական գործողություններ ընդդեմ իրավապաշտպանների

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրավապաշտպանները ենթարկվել են քրեական մեղադրանքների և հետապնդումների, ինչպես նաև քաղաքացիական վարկաբեկման և զրպարտության մեղադրանքների:

Քրեական հետապնդումներ և մեղադրանքներ

2011 և 2012 թթ. ընթացքում իրավապաշտպանների նկատմամբ տեղի են ունեցել քրեական հետապնդման դեպքեր, ինչպես նաև արձանագրվել են դեպքեր, երբ իրավապաշտպանների նկատմամբ մեղադրանք է առաջադրվել, որը հետագայում կասեցվել կամ կարճվել է փաստերի բացակայության պատճառով: Թեև «Հավաքների ազատության մասին» օրենքը ընդունվել է 2011 թ., հավաքների ազատությունն իրականում սահմանափակված է եղել[39], և խաղաղ ցույցերի ու բողոքի ակցիաների

[38] Տեսանկյուն, http://www.youtube.com/watch?v=vVtWk87NPIE

[39] «2011 թ. ԵԱՀԿ մարդկային չափման իրականացման հանդիպման համար Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) և Ընդդեմ խոշտանգումների համաշխարհային կազմակերպության (OMCT) զրություն», 2011 թ. սեպտեմբերի 27, http://www.fidh.org/Written-contribution-of-the

առնչությամբ բազմաթիվ մեղադրանքներ են ներկայացվել: Ոստիկանությունը խաղաղ ցուցարարներին ձերբակալել է խուլիգանության և հասարակական կարգը խախտելու մեղադրանքով, ինչը վկայում է, որ իշխանությունների նպատակն է եղել հնարավորինս արագ ցրել ցույցերը և ճնշել ցույցերի հնարավոր կազմակերպիչներին:

> *2011 թ. հոկտեմբերի 20-ին Վարդգես Գասպարին ձերբակալվել է ՀՀ կառավարության շենքի մոտ անցկացվող ցույցի ժամանակ, որը վերաբերում էր զինված ուժերում պարբերաբար գրանցվող մահվան դեպքերին և դրանց ոչ պատշաճ քննությանը: Ցույցի ժամանակ Գասպարին հայտարարել է, որ ՀՀ ոստիկանապետը (նախկին ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը) մարդասպան և խուլիգան էր: Ոստիկանությունը ձերբակալել է Գասպարիին և մեղադրել խուլիգանության մեջ: Գասպարին մեղավոր է ճանաչվել և ենթարկվել 30 000 դրամ (74 ԱՄՆ դոլար) տուգանքի.[40] 2012 թ. մարտին մեկ այլ ցույցի մասնակցելուց հետո Գասպարին մեղադրվել է հասարակական կարգը խախտելու մեջ: Չորս ամիս անց ոստիկանությունը կարճել է մեղադրանքը:*

Իշխանությանը քննադատող լրագրողները նույնպես քրեական հետապնդման են ենթարկվել:

> *Ընդդիմադիր Հայկական Ժամանակ թերթի լրագրող Հայկ Գևորգյանը ձերբակալվել է 2012 թ. փետրվարի 3-ին՝ երթևեկության կանոնները խախտելու և քաղաքացուն վրաերթի ենթարկելու մեղադրանքով: Գևորգյանը ձերբակալվել է այն բանից հետո, երբ թերթը քննադատական հոդված է տպագրել ՀՀ ոստիկանապետի մասին: Իրավապաշտպանները Գևորգյանի ձերբակալությունը որակում են որպես անհիմն մեղադրանք և վրեժխնդրություն հոդվածի համար.[41] Գևորգյանի նկատմամբ գործը կարճվել է բավարար ապացույցների բացակայության պատճառով:*

Իրավաբանները նույնպես քրեական հետապնդման են ենթարկվել նշված ժամանակահատվածում:

> *2012 թվականի ապրիլի 25-ին քրեական գործ է հարուցվել հանրային պաշտպան Գուրգեն Հարությունյանի նկատմամբ այն հիմնավորմամբ, թե իբր վերջինս ստիպել է իր վստահորդին սուտ ցուցմունքներ տալ: Այս մեղադրանքները ներկայացվել են այն բանից հետո, երբ արդարացվել Հարությունյանի պաշտպանյալը, որը մեղադրվում էր խուլիգանության մեջ:[42] Փաստաբանների պալատի և*

---

[40] «Ինձ համար որոշումն անսպասելի չէր, Վարդգես Գասպարի», Առավոտ օրաթերթ, 2012թ. հոկտեմբերի 29, http://www.aravot.am/2012/10/29/124822/

[41] «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հայտարարությունն ի պաշտպանություն Հայկ Գևորգյանի», 2012թ. փետրվարի 4, http://hcav.am/events/հելսինկյան-քաղաքացիական-ասամբլեայի-5

[42] Հայաստանի Հանրապետության Քրեական Օրենսգիրք, Մաս 4, Հոդված 258 Խուլիգանություն

մի շարք հասարակական կազմակերպությունների օգնությամբ դատարանը կարճել է գործը՝ գտնելով, որ մեղադրանքն ապացուցող փաստեր չկան:[43]

Զրպարտություն և վիրավորանք

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը կարգավորում է պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին հասցված վնասի փոխհատուցումը և արդյունավետորեն օրինականացնում է լրագրողների և լրատվամիջոցների նկատմամբ ճնշումները: 2011 թ. իշխանություններն այս իրավական դրույթն օգտագործել են լրատվամիջոցներին, հասարակական կազմակերպություններին և առանձին իրավապաշտպաններին ճնշելու համար:[44] Լրագրողների նկատմամբ ճնշումների դեպքերը՝ հատկապես դատական հայցերի միջոցով զգալիորեն ավելացել են 2011 թ.՝, երբ լրագրողների նկատմամբ 34 հայց է ներկայացվել ի տարբերություն 2010 թ. 4 հայցերի:[45]

2012 թ. լրատվամիջոցների նկամամբ հայցերի թիվը նվազել է այն բանից հետո, երբ ՀՀ Սահմանադրական դատարանն ընդունել է խոսքի ազատության ավելի լայն մեկնաբանություն: Դատարանը նշել է, որ պետական տարբեր պաշտոններ զբաղեցնող անձինք և քաղաքական գործիչները պետք է ավելի բաց լինեն հասարակական քննադատության նկատմամբ, և վերջիններս ի պաշտոնե ավելի քիչ են պաշտպանված հանրային վիրավորանքից, զրպարտությունից, քննադատությունից: Արդյունքում պաշտոնյաների համար ավելի դժվար է դարձել հիմնավորել լրագրողների նկատմամբ դատական հայցերը: 2012 թ. հուլիսի 1-ի դրությամբ տարվա ընթացքում միայն 6 դատական հայց է ներկայացվել լրագրողների դեմ:[46]

Զ. Իրավապաշտպանների գործունեության այլ սահմանափակումներ

Արդյունավետ իրավապաշտպանության խոչընդոտներ են հանդիսանում մարդու իրավունքների պաշտպանության օրենսդրական բացերը, իրավաբանական աջակցության տրամադրման սահմանափակումները և կամավորական աշխատանքին վերաբերող օրենքի բացակայությունը: Իշխանական ՀԿ-ները և դատական համակարգի կողմնակալությունը նույնպես խոչընդոտել է իրավապաշտպանների գործունեությանը:

---

[43] «Գուրգեն Հարությունյանի գործով որոշումը», ՀՀ Փաստաբանների Պալատ, 2012թ. մայիսի 25, http://www.advocates.am/index.php?option=com_content&view=article&id=655:2012-05-25-11-53-22&catid=39:2010-09-13-15-11-58&Itemid=144

[44] 2010թվականի մայիսի 18-ից ՀՀ Քրեական օրենսքրգի 135՝ վիրավորանք և 136՝ զրպարտություն հոդվածները ապաքրեականացվել են: ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով այժմ վիրավորանքի և զրպարտության համար նախատեսվում է 1-2մլն դրամ (մոտ €1900-3800) տուգանք՝ ՀՀ նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկից 2000-ապատիկի չափով:

[45] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, ԽԱՊԿ, 2011 թ. տարեկան զեկույց Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին, http://khosq.am/reports/2011-թվականի-տարեկան-զեկույց-2

[46] ԽԱՊԿ երկրորդ եռամսյակային զեկույց *(ապրիլ-հունիս 2012 թ.)*, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, https://docs.google.com/viewer?url=http%3A%2F%2Fkhosq.am%2Fwp-content%2Fuploads%2F2012%2F07%2F2-CPFE-quarterly-report-2012.arm_3.doc

Մարդու իրավունքների պաշտպանության օրենսդրական բացերը

Համաձայն Եվրոպայում ՀԿ-ների կարգավիճակի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի հիմնարար սկզբունքների և բացատրական հուշագրի՝ ՀԿ-ներ կարող են լինել ոչ պաշտոնական խմբերը կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները: Ազգային օրենսդրությունից կախված նրանք կարող են տարբեր կարգավիճակ ունենալ, որը կարտացոլի նրանց իրավաբանական անձի կարգավիճակին համապատասխանող ֆինանսական կամ այլ արտոնությունները:[47] Հայաստանում իրավապաշտպան կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը կարգավորվում է ընդհանուր կիրառման օրենքներով: Հասարակական միավորումը կարող է պետական գրանցում և իրավաբանական անձի կարգավիճակ ստանալ Քաղաքացիական օրենսգրքի համաձայն, որը նաև սահմանում է գրանցված հասարակական իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները:[48] Իրավունքներն ու պարտականությունները նույնն են նմանատիպ բոլոր կազմակերպությունների համար՝ անկախ գործունեության ոլորտից: Եթե հասարակական միավորումը չի գրանցվում (օրինակ, մարդու իրավունքների պաշտպանության համար ստեղծված նախաձեռնությունները), օրենսդրությունը նրանց համար իրավունքներ և պարտականություններ չի սահմանում:[49] Մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված գործունեության նկատմամբ ճնշումների և խախտումների դեպքում գործում են «ՀՀ Քրեական օրենսգրքի», «ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենքներով սահմանված ընդհանուր դրույթները: Այս դրույթները սակայն չեն ապահովում իրավապաշտպանների լիարժեք պաշտպանվածությունը, քանի որ նրանք հաշվի չեն առնում իրավապաշտպանական գործունեության խոչընդոտների ու սպառնալիքների բնույթը:

Բացի այդ Հայաստանում գոյություն չունի համապատասխան օրենսդրություն՝ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ճանաչված մարդու իրավունքների պաշտպանության կիրառման և իրականացման համար: Անհրաժեշտ է ունենալ Մարդու իրավունքների մասին առանձին օրենք, որը կապահովի կառավարության կողմից իր հանձնառությունների կատարումը: Առանձին օրենքը պետք է նաև մարդու իրավունքներով զբաղվող անհատների, նախաձեռնությունների և կազմակերպությունների գործունեության պաշտպանության երաշխիքներ սահմանի:

---

[47] Եվրոպայում հասարակական կազմակերպությունների կարգավիճակի վերաբերյալ հիմնարար սկզբունքներ և բացատրական հուշագիր, Եվրոպայի խորհուրդ, հոդված 5, էջ 5, http://www.osce.org/odihr/18045

[48] Հասարակական Կազմակերպությունների մասին ՀՀ օրենք, Հոդված 3, http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1295&lang=arm; ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, *Հոդված 52,* http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1556&lang=arm

[49] Իրավապաշտպանների իրավիճակի մասին ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույց, օգոստոս, 2009թ., պարբ. 59 Գրանցումը չպետք է պարտադիր լինի և ՀԿ-ներին պետք է թույլ տալ գործել և հավաքական գործունեություն ծավալել առանց գրանցելու, եթե նրանք այդպես են ցանկանում: Մյուս կողմից, ՀԿ-ներն իրավունք ունեն գրանցվել որպես իրավաբանական անձինք և համապատասխան արտոնությունների իրավասություն ունենալ: http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N09/441/98/PDF/N0944198.pdf?OpenElement

Իրավաբանական աջակցության սահմանափակում[50]

Թեև իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները ՀՀ-ում հնարավորություն ունեն քաղաքացիներին տրամադրել իրավաբանական աջակցություն՝ նրանց մարդու իրավունքների պաշտպանության ապահովման համար, 2012 թ. ընդունված օրենքը սահմանափակում է հասարակական կազմակերպությունների իրավապաշտպանների հնարավորությունը մարդու իրավունքների խախտումից տուժածներին ներկայացնելու դատարանում: Փաստաբանության մասին օրենքը պահանջում է, որ փաստաբաններն ունենան բարձրագույն իրավաբանական կրթություն և ստանան փաստաբանական արտոնագիր ՀՀ Փաստաբանների պալատի կողմից: Միայն արտոնագրված փաստաբաններն են կարող իրավաբանական ծառայություններ մատուցել քաղաքացիական գործերի դատաքննության ընթացքում:[51] Փաստաբանական արտոնագիր ստանալու համար իրավաբանները պետք է հայտ ներկայացնեն (վճարը՝ 100 ԱՄՆ դոլար), 6 ամիս սովորեն փաստաբանների դպրոցում (վարձավճարը՝ 1000 ԱՄՆ դոլար) և ստանան արտոնագիր (վճարը՝ 400 ԱՄՆ դոլար).

Անցյալում բազմաթիվ արտոնագրված փաստաբաններ հրաժարվել են նման խոցելի գործերով մտնել դատարան, մասնավորապես այն գործերով, որոնք կապված են բանակում բռնությունների և ոչ մարտական պայմաններում մահացության դեպքերի հետ: Այլ արտոնագրված փաստաբաններ բարձր վճար են պահանջում իրենց ծառայությունների համար: Այսպիսով ՀԿ-ների ներկայացուցիչները հաճախ դատական աջակցություն են ցուցաբերել մարդու իրավունքների խախտումներից տուժածներին կամ նրանց իրավահաջորդներին: Այս ներկայացուցիչներից ոմանք իրավաբանական կրթություն ունեն, բայց արտոնագրված չեն, ոմանք պաշտոնական իրավաբանական կրթություն չունեն, սակայն հայտնի են տուժողների և նրանց իրավահաջորդների դատական պաշտպանությամբ:

Որոշ իրավապաշտպաններ կարծում են, որ նոր օրենքը թիրախավորում է իրավապաշտպաններին, հատկապես այն պատճառով, որ կառավարությունն ու դատական համակարգը պատմականորեն չեն կարողացել արդար դատաքննություն ապահովել մարդու իրավունքների խախտումներից տուժածների համար: 2012 թ. օրենքի ուժի մեջ մտնելուց հետո բազմաթիվ հանրահայտ իրավապաշտպաններ այլևս հնարավորություն չեն ունեցել դատավարական գործընթացում ներկայացնելու տուժողների շահերը: Որոշ իրավապաշտպանների համար արտոնագիր ստանալու

[50] Իրավապաշտպանների մասին ՄԱԿ-ի Հռչակագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետի գ) ենթակետը նախատեսում է, որ անհատները, կազմակերպությունները և խմբերը իրավունք ունեն "առաջարկել և տրամադրել մասնագիտական որակյալ իրավական աջակցություն կամ այլ համապատասխան խորհուրդ և աջակցություն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հարցում:" ՄԱԿ-ի Հռչակագիր անհատների, խմբերի և հասարակության մարմինների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ համընդհանուր ճանաչված մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները խթանել և պաշտպանել:
http://www.ohchr.org/Documents/Issues/Defenders/Declaration/declaration.pdf

[51] ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, Հոդված 39 Գործերի վարումը ներկայացուցիչների միջոցով, Հոդված 40 Անձինք, որոնք կարող են ներկայացուցիչ լինել դատարանում http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1918&lang=arm

համար անհրաժեշտ գումարը և ժամանակն արգելք է հանդիսացել, և նրանք այլևս հնարավորություն չունեն իրավաբանական ծառայություններ մատուցելու մարդու իրավունքների խախտումներից տուժածներին:

Կամավորներ

Կամավորներն իրավապաշտպան կազմակերպության անհրաժեշտ մասն են կազմում, հատկապես այն դեպքում, երբ կազմակերպությունն աշխատում է սահմանափակ մարդկային և ֆինանսական ռեսուրսներով: Հայկական օրենսդրության համաձայն՝ հասարակական կազմակերպությունների համար մատուցվող յուրաքանչյուր ծառայություն ենթակա է «գործատու»-«աշխատող» իրավական կարգավորմանը և ենթադրում է համապատասխան վճար՝ աշխատավարձ: Կազմակերպության կողմից աշխատավարձի չվճարումը կարող է հանգեցնել հարկային և վարչական իրավախախտման: Արդյունքում կազմակերպությունների համար դժվար է հաշվետու լինել իրենց գործունեության մեջ ներգրավված կամավորների համար և կազմակերպությունների կամավորական ծրագրերը ձևակերպված չեն:

Իշխանական ՀԿ-ներ

Որոշ ՀԿ-ներ, որոնք աջակցել կամ համագործակցել են կառավարության հետ, նույնպես դժվարություններ են ստեղծել իրավապաշտպան կազմակերպությունների համար: Իրավապաշտպանների կողմից մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստերի հրապարակման դեպքում իշխանական հասարակական կազմակերպությունները հանդես են գալիս ի պաշտպանություն կառավարության և փաստացի լեգիտիմացնում են իշխանությունների անօրինական գործողությունները: Օրինակ «Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպությունը իշխանամետ հասարակական կազմակերպություն է, որը դիտորդական առաքելություն է իրականացնում ընտրությունների ժամանակ: 2009 թվականից կազմակերպությունն իր վերջնական զեկույցներում ոչ մի ընտրական խախտում չի արձանագրել,[52] մինչդեռ միջազգային և տեղական այլ դիտորդներ գտել են, որ ընտրություններն անցել են բազմաթիվ թերություններով:[53] Երկու այլ կազմակերպություններ՝ «Հայոց արծիվները» և «Հայազն երիտասարդական միությունը» աջ իշխանամետ կազմակերպություններ են, որոնք մասնաճյուղեր են հիմնել հանրապետության գրեթե բոլոր մարզերում:[54] Այդ կազմակերպությունների ներկայացուցիչներն ակտիվորեն հրահրում և մասնակցում են իրավապաշտպան կազմակերպությունների դեմ հարձակումներին, ստանում են կառավարություն վարչական աջակցությունը և ծայրահեղ ազգայնական գաղափարախոսություն են քարոզում:

[52] «Զեկույցներ», Ընտրությունը քոնն է, http://www.iyc.am/eng/index-5.html

[53] Օրինակ, Ֆրիդոմ Հաուզը հայտնում է, որ 2009 թ. մայիսի համայնքային ընտրությունները Երևանում "տուժեցին նշանակալի խախտումներից, չնայած նրան, որ միջազգային դիտորդները հայտարարել են, որ կեղծիքները չեն վտանգել արդյունքների ընդհանուր օրինականությունը:" Ֆրիդոմ Հաուզ, "Ազատությունը աշխարհում 2011թ.: Հայաստան," http://www.freedomhouse.org/report/freedom-world/2011/armenia?page=22&year=2011&country=7987

[54] «Հայոց արծիվներ» Հայրենասիրական ՀԿ, http://www.hayocartsivner.am/masna&uxer.html

Դատական համակարգի կողմնակալություն

Դատական համակարգը շարունակել է կողմնակալ և կախյալ վիճակում մնալ: Դատարանները չեն արձագանքել մարդու իրավունքների խախտումներին և իրավապաշտպանների դեմ ուղղված բռնության դեպքերին վերաբերող բողոքներին:.

> *2011 թ. օգոստոսի 9-ին ոստիկանությունը բռնի կալանավորել է Հայ ազգային կոնգրես (ՀԱԿ) ընդդիմադիր կուսակցության երեք երիտասարդ անդամների, երբ ՀԱԿ անդամները փորձել են խանգարել ոստիկանության աշխատակիցներին, որոնք կամայականորեն ստուգել են քաղաքի կենտրոնում քայլող անձի ինքնությունը.[55] Ոստիկանության աշխատակիցները ուժի կիրառմամբ կալանավորել են երիտասարդներին, որոնց ոստիկանությունում ճանաչել են որպես ՀԱԿ անդամներ: Երիտասարդների կալանքի տակ գտնվելու ընթացքում ոստիկանությունը հրաժարվել է բուժօգնություն տրամադրել, չնայած այն բանին, որ երիտասարդները վնասվածքներ էին ստացել ձերբակալման ժամանակ.[56] Երիտասարդները մեղադրվել են ոստիկանության աշխատանքներին խոչընդոտելու մեջ և դատապարտվել համապատասխանաբար վեց, երեք և երկուական տարի ազատազրկման: Դատարանի վճիռը հիմնված է միայն միջադեպին մասնակցած ոստիկանների ցուցմունքի վրա.[57] Նրանցից մեկը ներկայումս կալանքի տակ է գտնվում: Երիտասարդները բողոքարկել են դատավճիռը.[58]*
>
> *2012թ. ապրիլի 30-ին Տիգրան Մանուկյանը հարձակվել է Մարդու իրավունքների Հելսինկյան Ասոցիացիայի ընտրությունների դիտորդ Արման Վեզիրյանի վրա, այն ժամանակ, երբ Վեզիրյանը դիտարկում էր ԱԺ համար ՀԱԿ պատգամավորի թեկնածուի նախընտրական քարոզարշավը:.[59] Վեզիրյանը հաղորդում է ներկայացրել ոստիկանություն և Մանուկյանի նկատմամբ քրեական գործ է հարուցվել: Իշխանությունների և իրենց անձնական շահերը հետապնդող տարբեր անձանց կողմից բազմաթիվ փորձեր են*

---

[55] «Հայ ակտիվիստները ձերբակալվել են ոստիկանության հետ բախումից հետո», Ազատ Եվրոպա Ռադիո", 2011 թ. օգոստոսի 11, http://www.rferl.org/content/armenian_activists_arrested_after_clash_with_police/24293508.html

[56] HAYNEWS.AM, *Հ այ Ազգային Կոնգրեսի հաղորդագրությունը՝ ակտիվիստների հետ կապված միջադեպի առնչությամբ,* http://haynews.am/hy/archive-67251

[57] ԵԽԽՀ 1643 բանաձև, "Հայաստանի կողմից Հանձնաժողովի 1609 (2008) և 1620 (2008) բանաձևերի իրականացումը",2009 թ. հստակ սահմանում է, որ միայն ոստիկանության աշխատակիցների վկայությունների վրա հիմնված մեղադրանքը չի կարող վստահելի համարվել և կարող է քաղաքական շարժառիթներ ունենալ. ԵԽԽՀ, http://assembly.coe.int/main.asp?Link=/documents/adoptedtext/ta09/eres1643.htm

[58] «Ազատությո՛ւն ՀԱԿ ակտիվիստներին. բողոքի ակցիա Գլխավոր դատախազության առջև», Tert.am, 2012 թ. օգոստոսի 17, http://www.tert.am/am/news/2012/08/17/hak-protest/?sw

[59] Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդի դեմ քրեական գործը հաշվեհարդար է. Միքայել Դանիելյան, Մարդու իրավունքների Հելսինկյան Ասոցիացիա, 2012թ. հունիսի 14, http://www.hahr.am/index.php/hy/component/content/article/484-the-criminal-case-against-helsinki-association-monitor-arman-veziryan-is-a-showdown-mikael-danielyan-

ձեռնարկվել Վեզիրյանին ստիպելու ետ վերցնել բողոքը: 2012 թ. հունիսի 12-ին նույն քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել Ա. Վեզիրյանին Տ. Մանուկյանին ծեծի ենթարկելու փաստի առթիվ: Թե գործի նախաքննության և թե դատաքննության ընթացքում քրեական դատավարության նորմերի բազմաթիվ խախտումներ են տեղի ունեցել: [60] *Զեկույցի կազմման ժամանակ Վեզիրյանի նկատմամբ հարուցված գործը դեռևս ընթացքի մեջ է եղել:*[61]

Դատական իշխանության անդամները հրապարակայնորեն քննադատել են իրավաբաններին, որոնք բարձրաձայնել են դատական իշխանությունների հետ կապված խնդիրների մասին:

2012 թ. հունիսի 11-ին ՀՀ Փաստաբանների պալատի անդամ մոտ 600 փաստաբաններ մեկօրյա գործադուլ են իրականացրել: Փաստաբանները բողոքել են ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ քաղաքացիական գործերով փաստաբանների կողմից ներկայացված դիմումների մեծամասնությունը, առանց դիմումատուի փաստարկներն ըստ էության քննելու մերժելու և մերժման որոշումը չհիմնավորելու պրակտիկայի դեմ:[62] *Ի պատասխան՝ Վճռաբեկ դատարանը հայտարարություն է տարածել՝ փաստաբաններին մեղադրելով քաղաքական նպատակներ հետապնդելու մեջ:*[63]

III. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավապաշտպանների Հարավկովկասյան ցանցը առաջարկում էմիջազգային հանրությանը կոչ անել Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կառավարություններին

- Անցկացնել իրավապաշտպանների, այդ թվում լրագրողների նկատմամբ հարձակումների և ճնշումների դեպքերի արագ, անաչառ և թափանցիկ քննություն և վերջ տալ իրավապաշտպանների նկատմամբ ահաբեկման և ոտնձգությունների անպատժելիության մթնոլորտին

[60] Օրինակ, նախաքննության ընթացքում, քննություն իրականացնող մարմինները Մանուկյանին որպես տուժող չեն ճանաչել: Բացի այդ, Մանուկյանի բողոքը բացակայում է գործի նյութերից և ներկայացված ապացույցներից, մինչդեռ օրենքով քրեական գործ կարող է հարուցվել միայն տուժողի բողոքի հիման վրա: Վեզիրյանի փաստաբանի գրավոր միջնորդությունները մերժելուց հետո, դատարանը հայտարարել է, որ փաստաբանի միջնորդությունները պարզապես կարծիք են և առկա է բավարար ապացույց գործն առանց տուժողի ներգրավման շարունակելու համար:

[61] Հայկական Ժամանակ, Խոչընդոտել են քարոզարշավը, 1 Մայիս, 2012, http://www.armtimes.com/33359

[62] «Հայաստանում 545 մարդ մասնակցում է փաստաբանների գործադուլին», Կովկասյան հանգույց, 2012թ. հունիսի 11, http://www.eng.kavkaz-uzel.ru/articles/21273/

[63] Վճռաբեկ Դատարանը փաստաբանների բողոքը քաղաքական է համարում" "Ազատ Եվրոպա Ռադիոկայան/Ազատություն ռադիոկայան, Հայկական ծառայություն, 2012թ. հունիսի 12, http://www.azatutyun.am/content/article/24611969.html

- Անժամկետ հրավերներ տրամադրել ՄԱԿ-ի և Եվրոպայի Խորհրդի հատուկ զեկուցողներին և իրականացնել նրանց առաջարկությունները
- Իրականացնել Համընդհանուր պարբերական զեկույցի այն առաջարկությունները, որոնք երկրներն ընդունել են
- Ապահովել իրավապաշտպանների և իրավաբանների մուտքը և մասնակցությունը կառավարման մարմինների բարեփոխման աշխատանքներում՝ ներառյալ դատական բարեփոխումները:

Մենք կոչ ենք անում Եվրամիությանը

- Խթանել իրավապաշտպանների պաշտպանության ԵՄ ուղեցույցերի մասին իրազեկվածությունը և ապահովել դրանց իրականացումը ԵՄ պատվիրակությունների և Հարավային Կովկասում անդամ երկրների դեսպանատների շրջանում: Պատվիրակությունների և դեսպանատների ներկայացուցիչները պետք է՝ մասնակցեն քաղաքացիական հասարակության կողմից կազմակերպված միջոցառումներին, հատկապես համապատասխան երկրների մայրաքաղաքներից դուրս գտնվող շրջաններում, դիտարկեն դատական նիստերը, որոնք վերաբերում են մարդու իրավունքների խախտումներին և իրավապաշտպաններին և պարբերաբար հաղորդակցվեն զանազան հասարակական կազմակերպությունների հետ, որոնք աշխատում են մարդու իրավունքների տարբեր հարցերի շուրջ
- Խրախուսել ԵՄ անդամ երկրների դեսպանատներին Հարավային Կովկասում հետևել ԵՄ ուղեցույցերին և անվճար, բազմակի մուտքի համար նախատեսված վիզաներ տրամադրել իրավապաշտպաններին՝ դյուրացնելու նրանց մասնակցությունը միջազգային շահերի պաշտպանությանը և ցանցային միջոցառումներին և բարելավել իրավապաշտպանների պաշտպանվածությունը
- Ապահովել, որ իրավապաշտպան կազմակերպությունները մասնակցեն մարդու իրավունքների երկխոսություններին ԵՄ և Հարավային Կովկասի համապատասխան երկրների միջև
- Մայրենի լեզուներով և ռուսերեն թարգմանել Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում մարդու իրավունքների խնդրին վերաբերող Եվրոպական խորհրդարանի համապատասխան բանաձևերը՝ հանրային իրազեկվածությունը բարձրացնելու համար
- Կապ պաշտպանել համապատասխան նախարարությունների հետ յուրաքանչյուր երկրի վերաբերյալ սույն զեկույցում ներկայացված առաջարկությունների իրականացման ուղղությամբ առաջընթացին հետևելու համար:

Առաջարկություններ Հայաստանի Կառավարությանը.

- Իրականացնել ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանների հարցերով հատուկ զեկուցողի առաջարկությունները, որոնք հրապարակվել են 2010թ. երկրներ նրա այցից հետո

- Մշակել բազմակողմանի և հակախտրական օրենսդրություն, որն արգելում է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման ցանկացած խտրականություն, այդ թվում, ատելության հողի վրա հանցագործություններն ու ատելություն պարունակող խոսքը
- Վերանայել փաստաբանների գործունեության վերաբերյալ օրենքը՝ ապահովելով, որպեսզի ոչ փաստաբանները կարողանան մարդու իրավունքների խախտումներից տուժողների շահերը ներկայացնել դատարանում
- Ապահովել իրավապաշտպանների պաշտպանությունը, հատկապես նրանց, ովքեր պաշտպանում են խոցելի խմբերի իրավունքները, օրինակ ԼԳԲՏ անձանց իրավունքները
- Ապահովել, որ իրավապաշտպանների նկատմամբ զրպարտության ու վարկաբեկման դեպքերը քննվեն արդյունավետ և թափանցիկ կերպով
- Անցկացնել իրավապաշտպանների իրավունքների խախտման և նրանց գործունեության սահմանափակման բոլոր դեպքերի անաչառ, թափանցիկ և արդյունավետ քննություն, ապահովել, որ այդ քննությունները կատարվեն անկախ մարմնի կողմից
- Կազմակերպել հանդիպումներ և երկխոսություններ տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, որոնք աշխատում են մարդու իրավունքների զանազան հարցերի ուղղությամբ՝ նաև մարզերում՝ բարձրացնելու պաշտոնատար անձանց իրազեկվածությունը մարդու իրավունքների միջազգային չափանիշների, այդ չափանիշների իրականացման և դրանց կիրառման մեխանիզմների վերաբերյալ
- Համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ՝հիմնել բողոքարկումների մի մեխանիզմ, որը կապահովի ոստիկանության և իրավապահ մարմինների կողմից թույլ տված խախտումների անկախ, արդյունավետ և թափանցիկ քննությունը: Հասարակական կազմակերպությունները պետք է ունենան նման մեխանիզմի իրականացումը դիտարկելու այդ թվում տեղեկատվության ձեռք բերելու և մեխանիզմում ներկայացված լինելու հնարավորություն:

Առաջարկություն Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին.

Հրապարակել առանձին տարեկան զեկույց՝ նվիրված Հայասատանում իրավապաշտպանների իրավիճակի վերլուծությանը՝ մասնավորապես ուշադրություն դարձնելով, թե ինչպես են գործնականում իրականացվել 2010թ. երկրներ այցից հետո ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանների հարցերով հատուկ զեկուցողի կողմից 2011 թ. մարտին հրապարակված առաջարկությունները: